№ 150 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 22 1898 ՇԱԲԱԹ ՕԳՈՍՏՈՍԻ 22 № 150

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տիկին Փեփրոնիա Թուրեան և հայ դերասանական ընկերութիւնը սրտի ցաւով յայտնում են ծանօթներին և բարեկամներին՝ առաջինը իր ամուսնու, միւսները իրանց բեմական ընկեր՝ դերասան

ԴԱՒԻԹ ԹՈՒՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ օգոստոսի 20-ին, Թիֆլիսում։ Թաղումը տեղի կունենայ կիրակի օրը, օգոստոսի 23-ին. յուղարկաւորութիւնը կը սկսվի առաւօտեան 10 ժամին Վէլիամինովսկայա փողոցից, «Կուպչեսկիէ» համարներից, դէպի Վանքի-մայր եկեղեցին, այնտեղից՝ Խոջիվանք։

Անբիծքը՝ ուրբաթ, օգոստոսի 21-ին և շաբաթ, օգոստոսի 22-ին, երեկոյեան 6½ ժամին, հանգուցեալի բնակարանում, այն է «Կուպչեսկիէ» համարներում։ 2—2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մրցութեան դաշտը. Փաստերի յեղաշրջում. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դաւիթ Թուրեան. Մի կարծիք ևս. Նամակ Շուշուց. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Լոյսը աւելանում է. Ֆրանսիա և Ռուսաստան. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ռաչիդ։

## ՄՐՑՈՒԹԵԱՆ ԴԱՇՏԸ

—

Այն աջողութիւնները, որ գերմանացիները ձեռք բերեցին Փոքր-Ասիայում, ինչպէս յայտնի է, նախանձ և եռանդ գրգռեցին այն բոլոր ազգերի մէջ, որոնք աչք ունեն այդ հարուստ, գեղեցիկ, բայց դժբախտ երկրի վրա։ Ներկայումս ռուսներն էլ աշխատում են մրցակից հանդիսանալ Միջագետքի և Սիրիայի դաշտերում։ Մի քանի ժամանակից ի վեր կոմս Վլադիմիր Կապնիստ Կ. Պոլսում աշխատում է ստանալ երկաթուղիներ կառուցանելու իրաւունք. և այժմ, ինչպէս հաղորդում են գերմանական լրագրները, որոնք առհասարակ լաւ տեղեակ են Թիւրքաց գործերին, նա ձեռք է բերել Եփրատեան երկաթուղու կառուցման արտօնութիւն։ Այդ մեծ ճանապարհը, որ պիտի միացնէ Միջերկրական ծովը Պարսից ծոցի հետ, միմիայն քաղաքական կարևոր նշանակութիւն չունի, իբրև Հնդկաստանի հաղորդակցութիւնները սպառնացող մի ռազմական գիծ։ Աւելի մեծ է երկաթուղու տնտեսական նշանակութիւնը։

Եւ իրաւ, նա պիտի անցնէ այն տեղերով, ուր հազարաւոր տարիներ առաջ ծաղկած էր Բաբելոնի և Ասորեստանի կուլտուրան։ Եփրատն ու Տիգրիսը Բաբելոնի դաշտերի համար նոյնն են, ինչ որ Նեղոսը՝ Եգիպտոսի համար։ Բայց այն ժամանակից, երբ պատմական ասպարէզից չքացան յիշեալ երկու պետութիւնները, երկիրը մատնվեց մի սոսկալի ամայութեան, դարձաւ մի անապատ, որի վրա այժմ փռված են հին կուլտուրայի աւերակները և թափառում են թափառական ցեղերը։ Թիւրքական ցեղը, որ դարերի ընթացքում այդ տեղերի տէրն էր, ի հարկէ, չը կարողացաւ վերադարձնել երկիրը իր նախնական բարգաւաճման. բարբարոսութիւնը երբէք չինել, բարեկարգել չէ իմացել, այլ միայն մեռցրել է ամեն ինչ։ Միջագետքի դաշտերը, որոնց պտղաբերութիւնը զարմացնում էր հին աշխարհը, անօգուտ ընկած են. Թիւրքը՝ որ իր հպատակից երեք կաշի է քերթում, երբէք չը մտածեց շահագործել այդ բնական առատութիւնները։

Այժմ՝ երբ շոգեկառքը կը սկսի ակօսել հին, մեռած դաշտերը, կարելի է յոյս դնել, որ մարդկութեան համար կը բացվի գործելու և աշխատելու մի նոր, ընդարձակ ասպարէզ։ Քաղաքական նպատակներով այժմ վայրենի երկիրները ծածկվում են երկաթուղիների ցանցով. մենք տեսնում ենք, թէ ինչպէս Չինաստանում լուսաւորված ազգերը ձեռքից ձեռք են խլում երկաթուղիները։ Ինչ էլ լինի այդ երկիրների քաղաքական ապագան, անվիճելի է, որ այժմեան կատաղի մրցութիւնից ահագին օգուտներ է ստանում քաղաքակրթութեան գործը։ Նկատի առնելով, որ Փոքր-Ասիան էլ ներկայացնում է քաղաքական մրցութիւնների մի շատ կարևոր դաշտ, մենք հաւատացած պիտի լինենք, որ այդտեղ այնպիսի ահագին ձեռնարկութիւններ, ինչպէս է Եփրատեան երկաթուղին, հեշտութեամբ գլուխ կը բերվեն։ Եւ անշուշտ այդ ճանապարհը չի բաւականանայ Միջերկրականից Պարսից ծոցը ապրանքներ փոխադրելու դերով, այլ կենդանութիւն կը տայ և այն տեղերին, ուր պիտի գործէ։ Երկաթուղին կունենայ ճիւղաւորութիւններ, և մշակող մարդու առաջ կուրծք բաց կանեն ոչ միայն Ասորեստանի դաշտերը, այլ և բնական հարստութիւններով լի լեռները։ Դրանք Հայաստանի, Քուրդիստանի լեռներն են։ Այդտեղ ապրող ժողովուրդները ամենահին ժամանակներում իջնում էին ասորա-բաբելոնեան ծաղկած դաշտերը, իւրացնում էին այնտեղի քաղաքակրթութիւնը և տարածում էին հիւսիսային լեռնաստանում։ Արդեօք մի և նոյնը չի՞ կրկնվի և այժմ։

Փոքր-Ասիան կղզիացած, մոռացված մի աշխարհ է և շարունակ արիւնաքամ է լինում բարքերի կոշտութիւնից, վաղուց տգիտութեան մէջ կորած մարդու բարբարոսական հակումներից։ Արդեօք քաղաքակրթութիւնը՝ լայն հոսանքներով թափանցելով կուսական երկրի ներսը, չի՞ վերացնի այդ անտանելի դրութիւնը, չի՞ մտցնի լոյս՝ խաւարի մէջ և չի՞ կատարի խաղաղ ու լուռ միջոցներով այն, ինչ որ դիպլոմատիան տասնեակ տարիների ընթացքում տքնում է գլուխ բերել դատարկ գրագրութիւններով։ Շատ մտածողներ այն կարծիքի են եղել, թէ միայն քաղաքակրթութիւնը կարող է կործանել այն դժոխքը, որ յայտնի է Ասիական Թիւրքիա անունով։ Եթէ այդ ճիշդ է, ապա ուրեմն քաղաքական նպատակներով կառուցվող երկաթուղիները կը դառնան մի մի կենսատու երակներ, որոնք կեանք կը հաղորդեն դժբախտ աշխարհին, բայց մանաւանդ այն ժողովուրդներին, որոնք այժմ էլ ծառայում են կուլտուրային, բայց հէնց այդ պատճառով էլ մատնված են սարսափելի տանջանքների։ Քաղաքակրթական այդ ցանկալի շրջանում Փոքր-Ասիայի հայ տարրը, անշուշտ, կը կատարի մի պատուաւոր, կուլտուրական մեծ դեր՝ արժանի նրա պատմական անցեալին և ներկային։

## ՓԱՍՏԵՐԻ ՅԵՂԱՇՐՋՈՒՄ

### I

Կեղծել ճշմարտութիւնը յանցանք է, բայց քարոզել ստութիւն այնպիսի ամբիոնից, որից միայն անպայման ճշմարտութիւն պէտք է լսվի, և ժամանակաւոր աջողութեան համար զոհել արդարութեան զգացումը,—այդ կրկնապատիկ յանցանք է։ Եւ այդպիսի մի յանցանք գործել է Թիւրքիայի կաթոլիկ հայերի պատրիարք Ստեփան—Պետրոս Ժ. Ազարեան, «տանն Կիլիկիոյ կաթողիկոսը»։ Կամենալով արդարացնել իրան կաթոլիկ աշխարհի առաջ՝ այն մեղադրանքների մէջ, որ ֆրանսիական հռչակաւոր հրապարակախօս Վիկտոր Բէրար բարդել է իրան Ազարեանի և նրա պատրիարքարանի վրա՝ անխնայ կերպով քննադատելով այդ պատրիարքարանի գործունէութիւնը, Ազարեան պատրիարքը մի ընդարձակ տեղեկագիր է ուղղել հայր Ֆէլիքս Շարմանին, որի մէջ մանրամասն հաշիւ է ներկայացնում, թէ ինչ գործունէութիւն է ունեցել պատրիարքարանը վերջին աղետալի տարիներում և որքան արդիւնաւէտ կերպով գործադրել է աշխարհի ամեն կողմերի կաթոլիկներից ուղարկած նուէրները յօգուտ թշուառ հայերի։ Տեղեկագրի այդ մասի հետ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին մի ուրիշ անգամ, ի նկատի ունենալով, որ նա վերին աստիճանի հետաքրքիր տեղեկութիւններ է պարունակում, բայց այժմ չենք կարող չը պախարակել Ազարեան պատրիարքի տեղեկագրի այն մասը, որով նա իր հեղինակաւոր կարծիքն է յայտնում հայկական վերջին ազէտների և կոտորածների իսկական պատճառների ու շարժառիթների մասին, կցելով որ այդ կարծիքը ամբողջ

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՌԱՇԻԴ

(Պատկեր)

### III

Գարնային պայծառ երեկոյ էր. արևի սակայ դունդը կամաց-կամաց քաշվեց եթերի մէջ սփռած իր ցնցուղները և գնաց թաղվելու Մարալայ սարերի թիկունքին, որոնք հսկայական ստուերներով պատեցին կանաչապատ դաշտերն ու ձորերը։ Վերջալուսի մի քանի ճառագայթներ միայն դեռ լուսաւորում են սարերի կանաչազարդ գագաթները. հետզհետէ այդ ճառագայթներն էլ քաշվեցան՝ տեղի տալով երեկոյեան աղջամուղջին, որ եկաւ պարուրելու արար աշխարհը։ Միմիայն շառագոյն արևմուտքում ձիւնանման ամպի մի քանի պատառներ շարունակում էին դեռ պահպանել ցերեկվայ շողազարդ լուսատուի պայծառ լոյսի ծիրանագոյն շլիները։

Բարձրացաւ երեկոյեան զով քամին, անցաւ կանաչազարդ լեռների բլուրների վրայով, սլսլացրեց, իրար տուեց խոտերն ու հոտառատ ծաղիկները, և նրանց անոյշ բուրմունքը տարաւ սրփռելու ջինջ եթերի մէջ։

Դուրեկան բառաչով օդը թնդացնելով՝ պարարտ արօտից, կանաչազարդ դաշտերից յետ դարձան և գիւղը լցվեցին հաղարաւոր ոչխարներ։ Նախիրն էլ եկաւ տաւարարածների հետ։ Խոտ հնձողները՝ գերանդիներն ուսներին, կատակներ անելով, երգեր երգելով մտան գիւղ։ Դաշտը դատարկվեց և գիւղը կենդանացաւ։ Ամեն կողմ բառաչ, ամեն կողմ ձայն, խօսակցութիւն, աղմուկ, կանչվռտոց։ Հովիւը ոչխարներն է համրում, կանայք ու աղջկերք գառներն են թողնում, կամ կթում ոչխարներ, որոնց բառանչն ու մկկոցը գիւղը լցրել է։ Նախրապանն էլ տնից տուն շրջելով ծեծում է դռները, իր սովորական հացը հաւաքում, դռներից պոռալով՝ «Հաց բերէք, հաց» և մի-մի հաց առնելով, ուսին գցելով շարունակում է ճանապարհը։ Ոմանք կթատներն են տեղաւորում, կապում ու կապոտում, ուրիշները մոլորած անասուններն են փնտրում՝ բարձր ձայնով սրան կամ նրան հարցնելով, կամ նախրապանին փնտրելով և ամբողջ գիւղը միանգամից թնդում է բազմութեան աղմուկից՝ մի անորոշ, անհասկանալի մումոցով։

Տէր-Մարուքն էլ դուրս եկաւ եկեղեցուց և տէրողորմեան համբելով կամաց-կամաց քայլում է դէպի տուն ռէս Պէտօի հետ։ Ճանապարհին ժամաւորների բազմութիւնը՝ մարդ թէ կին աջ ու ձախ յարգանքով յետ է քաշվում, ճանապարհ բանալով պատկառելի ծերունիներին, որոնք ցածր խօսելով շարունակում են իրանց ճանապարհը։

Տէր-Մարուքը իր կեանքի արևմուտքին մօտեցած ծերունի էր։ Տարիները և հոգսերը իրանց քաչքաչիչ կնիքը դրել են նրա մարմնակազմի վրա, ողնաշարը թեթև կորացած է, բայց այնու ամենայնիւ բոլոր նշաններից երևում է, որ այս մարդը մի հոյակապ տղամարդ է եղած մի ժամանակ։ Սպիտակ երկար միրուքը, փռված ծածկում է նրա կուրծքը, ալեզարդ մազերը քահանայական գլխարկի տակից թափվում են մինչև ուսերը և ծածկում պարանոցը։ Դէմքը նիհար է բայց ազդու, իսկ երկու սպիտակած խիտ յօնքերի հովանու տակ պլպլացող աչքերը մի անօրինակ կենդանութիւն են տալիս ծերացած դէմքին. այդ աչքերում փայլում է երիտասարդական կորովի մնացորդը։ Նրա վրա նայելով՝ մարդուս տիրում է առհասարակ այն զգացմունքը, որպիսին մարդ զգում է երբ կանգնած է հինաւուրց փառաւոր շինութեան տխուր և պատկառելի աւերակների առաջ։

Ծեր է նոյնպէս և ռէս Պէտօն, թէև սրա մէջքը կորացած չէ Տէր-Մարուքի պէս, բայց ածելած դէմքին նոր բսած կարճ մազերը բոլորովին սպիտակած են։ Ամբողջ դէմքի վրա փայլում է յոգնածութիւն և տխրութիւն։ Աչքերը կորցրել են իրանց կրակը և նրանցից մինը զրկվել է տեսողութեան կարողութիւնից։ Բոլոր նշաններից երևում է, որ այս մարդը նոյնպէս շատ է տանջվել. և արդարև քանի-քանի անգամ գիւղի ցաւ ու հոգսերի համար նրան բէգերի դուռն են քաշ տվել, ամիսներով բանտ նստացրել և ամեն անգամ տուգանքներով ճանապարհ գցել։

Երկու ծերունիների սովորութիւնն է երեկոյեան ժամերգութիւնից յետոյ խօսելով անցնել գիւղամիջից և միասին գնալ իրանց բնակարանները, որոնք շատ էլ հեռու չեն իրարից։ Արդէն նրանք Տէր-Մարուքի դռանն են, բայց այսօր սովորական հրաժեշտի ողջոյնը չը տուին իրար և միասին ներս մտան։ Երևում է, որ նրանք մի շատ ծանրակշիռ և հետաքրքիր խնդրով են զբաղված։ Նրանց դէմքն այսօր սովորականից աւելի լուրջ էր և տխուր. այդ նկատեցին գիւղում ամենքը և երբ նրանք անցան, այդ բանը խօսակցութեան և ենթադրութիւնների նիւթ դարձաւ, որովհետև այս երկու ծերունիներն են յանձն առած ամբողջ գիւղի բաղդը. սրանք են բէգի, իշխանի դուռ գնում, սրանք են բանտ նստում, երբ զայրացած է բէգը, սրանք են մեծամեծներին կաշառք տալիս՝ թշուառութիւնից գիւղը փրկելու համար։ Ահա թէ ինչու գիւղացիներն էլ սաստիկ հետաքրքրվեցին, երբ իրանց երկու իշխաններին չափից դուրս լուրջ, խորհրդաւոր գտան. դա ամենևին բարի բան չէր դուշակում. այդ նշան էր, որ կամ հարկահաներն են շուտով գալու, կամ բէգն է անցնելու գիւղով և կամ դրա նման մի այլ թշուառութիւն է պատրաստվում։

Ծերունիներն անցան բակից, և Տէր-Մարուքը հրելով տան դուռը հրամցրեց ռէսին։ Նրանք ներս մտան մի դալան, որից երեք դռներ տանում էին տան երեք բաժանմունքը՝ թոնրատունը, գոմը և օդան։ Երկրի անապատով վիճակը ստիպել էր խեղճերին տան բոլոր բաժանմունքները իրար կից չինել, այնպէս որ թէ տաւարն ու ոչխարը, թէ ընտանիքը մի և նոյն դռնովն են ներս մտնում և ապա այս կամ այն դռնով իրանց յատկացած բաժինը գնում։ Օդան նրանց հիւրանոցն էր և այստեղ էլ մտան Տէր-Մարուքն ու ռէս Պէտօն։

Սա մի երկարաւուն քառակուսի շինութիւն էր, որի ճակատում, պատի մէջ, շինված էր բուխարին. նրանից աջ ու ձախ կողմերում, պատերի տակ, երկար փռված էին թաղիքներ և դորգեր, դրանց վրա էլ մի-մի մինդար և բարձեր։ Երկու կողմի փռուածքի միջանցքը բաց էր մինչև բուխարին։ Օդան լուսաւորվում էր առաստաղի հերթկից։

Տէր-Մարուքն ու ռէս-Պէտօն նստեցին մինդարների վրա. խօսակցութիւնը շարունակվում էր։

—Ասացիր թէ Խութն աւերված է, հարցրեց Տէր-Մարուքը։

—Աւերված է, տէրտէր, և բնակիչներն էլ կո-

հայ ազգի առողջամիտ մեծամասնության կարծիքն է։

Գովելի է Ազարեանի պատրաստականությունը՝ լիակատար հաշիւ ներկայացնել կաթոլիկ աշխարհին՝ ստացված նուէրների գործադրության մասին և այդպիսով փարատել բոլոր թիւրիմացութիւններն ու կասկածները, և երանի թէ լուսաւորչական հայերի հոգևոր պետերը ևս ունենային այդ յատկությունը։ Միայն թէ Ազարեան պէտք է բաւականանար այդ գեղեցիկ քայլով... Եւ եթէ նա չունէր քրիստոնեայ հովուապետի հերոսական քաջությունը բացարձակ ասել ճշմարտությունը, կամ եթէ վանական նկատումներ արգելում էին նրան այդ քաջությունը գործել, գոնէ նա պէտք է լռէր... Նա չը պէտք է մոլորեցնէր երկրագնդի վանական անկիւններում սփռված միլիոնաւոր կաթոլիկների միտքը՝ սըխալ և կեղծ գաղափար տալով նրանց հայերի կրած սարսափելի աղէտների պատճառների մասին։ Նա լաւ գիտէ, որ այն հանդէսը, որի մէջ տպված է իր տեղեկագիրը—«Oeuvre d'Orient»—մի քանի հազարներով տարածվում է երկրագնդի կաթոլիկների մէջ և նրա՝ իբրև կաթոլիկ եկեղեցու նուիրապետության մէջ բարձր դիրք ունեցող հովուապետի ձայնը կարող է որոշ վըստահություն ներշնչել և, հետևաբար, ծուռ ուղղություն տալ հասարակական կարծիքին։

Ազարեան պատրիարքը զարմանալի համեստաշխարհություն է ցոյց տալիս իր չարաբաստիկ պաշտօնակցի—Օրմանեան պատրիարքի հետ. նա յայտնում է ի լուր աշխարհի, որ «Թիւրքահայերի Ազգային Սահմանադրությունը ոչ թէ իրականապէս հայ ազգի վերածնության պատճառ է դարձել, ինչպէս հաւատացրել են Վիկտոր Բերարին մի քանի խենթեր, որոնք աշխատում են ցնորական յոյսերով խաբել իրանց հայրենակիցներին և որոնք այժմ խորին կերպով ատված են ամբողջ ազգից,—այլ այդ վաղաժամ գործը, ազգի ամենախելացի և ուղղամիտ մասի, ինչպէս և եւրոպական դեսպանների կարծիքով, այն ձևով, որ նա յղացել և գործադրվել է, նըպաստել է միայն այն բանին, որ կեղծ ուղղություն է տուել ազգային զգացման հայ ժողովրդի մէջ. նա, այդ սահմանադրությունը, շատ վայրի վերայ է դարձրել երիտասարդության կրթությունը, նրան մի թեթևաբարոյ դաստիարակություն է տուել, խախտել է պատրիարքական վարչության հիմքը, թուլացրել է նրա իշխանությունը և ազդեցությունը, վերջապէս, թշնամության, երկպառակության, վանդալաւոր և ցնորական ներշնչումների առաջ դուռ է բացել, ներշնչումներ, որոնք մի սխալից միւս սխալի մէջ գցելով, վերջացան այն սարսափելի աղէտով, որի սրտաճմլիկ պերիպետիաները շատ յայտնի են...»։

Եւ այդպիսի մի կեղծ և ճշմարտության տարրական պահանջներին հակասող յայտարարությամբ, Ազարեան պատրիարքը ուրանում է Ներսէսի, Իզմիրլեանի գործերը, դատապարտում է նրանց գործունէությունը, խաչ է դնում Ս. Ստեփանոյի դաշնագրի վրա ու արդարացնում է այն սոսկալի հարստահարությունները, որոնց դէմ այնքան բուռն կերպով բողոքեց համայն քրիստոնէական աշխարհի առաջ նոյն «Oeuvre d'Orient», որոնց դէմ բողոքում է նոյն իսկ դիպլոմատիան...

Յաջորդ անգամ մենք կը դառնանք Ազարեանի միւս սոփեստական կարծիքներին և նրանց հերքման։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԴԱՒԻԹ ԹՈՒՐԵԱՆ

—

Օգոստոսի 20-ին Թիֆլիսում, 15 օրվայ ծանր հիւանդությունից յետոյ, 58 տարեկան հասակում, վախճանվեց մեր բեմի առաջնակարգ դերերից մէկը—տաղանդաւոր կոմիկ Դաւիթ Կարապետեան Թուրեան։

Հաղորդում ենք մի քանի կենսագրական տեղեկություններ հանգուցեալի մասին։ Թուրեան ծնվեց Կ. Պոլսի Պէշրա քաղաքամասի Թարլաբաշի թաղում, 1840 թվի օգոստոսի 26-ին։ Սկզբնական ուսումն ստացաւ Վենետիկի Մխիթարեանների վարժարանում, ուր 5 տարի ուսանելուց յետոյ, հիւանդության պատճառով, դուրս եկաւ այդտեղից և վերադարձաւ Կ. Պոլիս։ Այդտեղ նա մտաւ պետական ծառայության մէջ։ Դեռ աշակերտ եղած ժամանակ Թուրեան սիրում էր թատրոն։ Նա իր իսկական արտիստական գործունէությունն սկսեց 1860 թվին, երբ հրաւիրվել էր նոր կազմակերպված «Արեւելեան թատրոնի» դերասանական մշտական խմբին մասնակցելու, բեմ դուրս գալով առաջին անգամ «Երկու յիսնապետ» դրամայի մէջ։ Փոքր ժամանակից յետոյ, նա սկսեց խաղալ կոմիկական դերեր, որը և դարձաւ նրա ամպլուան։ Այդ ժամանակից սկսվեցին նրա աջողությունները։ Երկու տարուց յետոյ վերև յիշած մշտական խումբը գնաց Զմիւռնիա՝ իր գործունէությունը շարունակելու։ Թուրեան այդտեղ ամուսնացաւ և մնաց $1^1/_2$ տարի, պարապելով մի և նոյն ժամանակ լուսանկարչի մօտ։ 1869 թվին Կ. Պոլսում կազմվեց Վարդովեանի խումբը, որին մասնակցեց Թուրեան։ Առաջին անգամ նա Կովկաս ոտք դրեց 1870 թվին, երբ Ֆաստուլաճեան ամուսինները խումբ կազմած՝ շրջում էին Անդրկովկասեան հայաբնակ քաղաքները։ Վերադառնալով նոյն խմբի հետ Թիւրքիա, մի քանի ժամանակից յետոյ Թուրեան գընաց Բոլգարիա, շրջեց հարաւային Ռուսաստան, Եգիպտոս, Ադրիանուպոլիս, Սալոնիկ, Զմիւռնիա, Աթէնք, Պիրէա, և ուրիշ շատ տեղեր՝ մասնակցելով երբեմն օպէրային, երբեմն էլ դրամատիկական խմբերին։ Այսքան երկար տեղեր համարեա անընդհատ ճանապարհորդելուց և բաւական գրկանքներ կրելուց յետոյ, նա, սաստիկ յոգնած, սկսել էր արդէն առևտրով պարապել, երբ հրաւիրվեց Թիֆլիս՝ թատրոնական մասնաժողովից 1891—92 սէզոնի նորակազմ խմբում խաղալու համար։ Թուրեան սիրով թողեց առևտուրը և լի յոյսերով, գործելու բուռն վաղվանից սկսիր եկեղեցում հսկում կատարել, թող Աստուծոյ աչքն էլ մեր վրա քաղցր լինի, մարդ ինչ որ քաշի, իր մեղքերից կը քաշի։

Խորհուրդ դումարելու համաձայնությունը կայացաւ Բանոնի երկու առաջնորդների մէջ, բայց խօսակցությունն այնուհետև դեռ շատ երկար շարունակվեց։ Արդէն կէս գիշերը մօտ էր։ Գիւղում աղմուկն ու շարժումը դադարել էր. ամենքն ընկղմվել էին խոր քնի մէջ. ընդհանուր խաղաղությունը վրդովում էր միայն երբեմնակի շների չարագուշակ հաչոց ու ոռնոցով։ Սրանցից մէկը, մանաւանդ գիւղի հեռաւոր ծայրում յուսահատ կաղկանձում, վնդռտում էր, ամենքն էլ ձայնակցում էին նրան՝ այլանդակ, խլացնող համերգ կազմելով, և ապա կրկին լռում։ Բայց ահա հեռաւոր շունը կրկին հաչել սկսեց, բայց այս անգամ աւելի կատաղի, աւելի բարձր, միւս շների աղմուկն էլ միացաւ և ընդհանուր դարձաւ։ Երկու ծերունիներն ականջները սրած՝ ուշադրությամբ հետևում են այս անօրինակ աղմուկին, որը նրանց կարծիքով մի շատ ծանրակշիռ պատճառ պէտք է ունենար։

Շատ չանցած, նրանց կասկածներն արդարացան. շների հաչոցի մէջ լսելի եղան նաև մարդկանց ձայներ, որոնցից մէկը պարզ և որոշ կերպով՝ «եաման քեօմաք» պոռաց. սրան հետևեց երեխաների լացի ու վոյի ձայներ։ Այլ ևս ոչ մի կասկած չը կար, որ գիւղացիներից մէկի տան վրա գիշերային յարձակումն է տեղի ունեցել, և անշուշտ Մխօի տունն էր, քանի որ նրա տունն էր գտնվում գիւղի ծայրում միւսներից անջատ. գոնէ այսպէս վճռեցին տէր Մարուքն ու ռէս Պէտօն և պատրաստվեցին դուրս ելնել գիւղը ոտքի հանելու համար, բայց դեռ երկու քայլ չարած օդայի դռանը երևեցաւ Ռաշիդի վայելչակազմ հասակը։

—Աւազակները Մխօի տունը կոխել են, ասում են աղջիկ են փախցրել, գոչեց նա, և առանց որ և է պատասխանի սպասելու, վազեց օդայի պատից քաշ ընկած զէնքերը խլեց, դուրս քաշեց իր Ձերմակը և առանց թամբելու, մէջքին թռաւ և անյայտացաւ խաւարի մէջ, մինչդեռ ողջ գիւղը տակն ու վրա էր եղել, մարդիկ վազում էին դէպի աղմուկի կողմը, նոր զարթնածները վազողներին հարցնում էին բանի էությունը։ Ոչ ոք չիմացաւ թէ Ռաշիդը մեն-մենակ ուր գնաց։

Ռաշիդը գիտէր, որ աւազակները, որտեղից էլ գնալու լինէին, պէտք է Աստուածածնի բլրի տակից անցնեն։ Ուստի մտածեց մի կարուկ ճանապարհով այդ բլրի տակ նրանց առաջը կտրել. սրա համար հարկաւոր էր գետն անցնել, միւս ափով գնալ մինչև բլրի ուղղությունը, և ապա կրկին անցնել և բլրի առաջ դուրս գալ։ Ահա նա արդէն գետի ափումն է, որ գոռում գոչումով հոսում է խաւարի միջից։ Մի բօպէ ջրի աղմուկը, համատարած խաւարը, իր միայնությունը նրան սարսափ ազդեց, և նա կանգ առաւ մտախոհ. բայց մտածելու ժամանակ չը կար, գետի խշշոցն անկարող եղաւ խլացնել գիւղից լսվող բազմաղան ձայները, հարայ-հրոցը և նա ս. Աստուածածնին յանձնելով իրան՝ խթեց ձիու կողքերը. կենդանին սարսափած ջրից ու խաւարից մի վայրկեան յետ-յետ քաշվեց, բայց վերջը հնազանդվելով տիրոջ ցանկությանը՝ մտնչալով ջուրը մտաւ, սաստիկ շրփոց հանելով։ Կրծքից վեր խորասուզված ջրի մէջ, նա հզօր կրծքով դէմ տուեց ալիքներին և սկսեց առաջ գնալ։ Ռաշիդը քաջալերում էր փռնչացնող կենդանուն, յոյսերով բարձր բռնած գեղեցիկ պարանոցը. երկար չը քաշեց այս վտանգաւոր ընթացքը. մի քանի բօպէից յետոյ Ռաշիդն արդէն միւս ափումն էր, և սլանում էր գետի ընթացքով դէպի վար, դէպի բլուրը։ Ահա նա արդէն բլրի առաջն է. կրկին հարկաւոր է գետակն անցնել։ Առաջին փորձից քաջալերված, նա այս անգամ համարձակ քշեց իր ձին և շուտով դուրս եկաւ և բլրի դէմ յանդիման կանգ առաւ։

Նա ձիուն չէր խնայել և համոզված էր, որ գողերն անցած չեն լինի, քանի որ նա անհամեմատ աւելի երկար ճանապարհ էր, քան իր կտրածը և երկրորդ՝ աղջիկ փախցնելն էլ այնքան հեշտ բան չէր, որ նրանք կարողանային իրանից առաջ այստեղից փախած լինել։

Ռաշիդն շտապով վար բերեց հրացանը, քաշեց նրա ոտքը և ճանապարհի մէջ տեղում կանգնած սպասում էր առանց ձիուց իջնելու։ Այդ բօպէում նրան ոչ մի միտք չէր խռովում. ոչ թշնամիների անսպասելի բազմությունը, ոչ իր միայնությունը և ոչ յանդուգն ձեռնարկության բոլոր անաւորությունը։ Նա միայն սարսափում էր այն մտքից, թէ մի գուցէ անօրէններն անցած լինեն և իր բոլոր ջանքերն ապարդիւն անցնեն։ Լսողությունը սրած, նա աչքերը չռել էր խաւարի մէջ, աշխատելով որ և է ստուեր ջոկել, կամ լսել որ և է շշուկ, կամ ձիերի տրոփիւն. սակայն իզուր, միայն գետն էր իր անաւոր աղմուկով դղրդում շրջակայքը՝ զարկվելով Աստուածածնի աւերակ վանքի ժայռոտ հիմքին, որ ցցված էր խաւարի մէջ, որպէս մի վիթխարի քարակոյտ։ Անցան մի քանի բօպէներ, յափտենականության չափ երկար. Ռաշիդը մօտ է յուսալ հոգևորականներին, բայց նրանց, կարծես, դուր չէ գալիս մեր հոգևորականության ներկայ կազմակերպությունը (կուսակրօններ և քահանաներ) և նրանք կուսակրօններ չեն ուզում։ Նրանք ուզում են՝ «վերացնել կուսակրօնությունը, ջնջել մուրացկանությունը և սահմանել որոշ վարձատրություն այժմեան խայտառակ անկարգության փոխարէն»։ Այդ տեսակ առաջարկությունները (դուրս հանելով վարձատրության հարցը), մեր կարծիքով, ոչ մի միտք չունեն գործնական տեսակէտից։ Եթէ մեր ձեռքումը լինէր կուսակրօնության վերացնելը և մենք իսկոյն նրանց բոլորին ամուսնացնէինք, կամ ուրիշ կերպով վերացնէինք, դրանով ոչ մի նպատակի հասած չէինք լինի, որովհետև գործի էությունը դրանում չէ։ Կարևոր է «ոչ ձևը, այլ բովանդակությունը»։—Կան քարոզողներ, որ հոգևորականներից միանգամայն ձեռք վերցնենք, ինչպէս, օրինակ՝ Ա. Յակոբեան («Մշակ» № 114) և Գ. Կ. («Մշակ» №№ 104—105), որը սակայն ոչ միայն ձեռք է վերցնում, այլ և խորհուրդ է տալիս Եւրոպայի «լաւագոյն ինտելիգենցիային» հետևելով, գործել հոգևորականության դէմ, աշխատել ազատվել միանգամից այդ անպէտք դասակարգից։

Մենք պ. Լ. Սարգսեանի և Մատթէոս վարդապետի հետ միասին կարծում ենք, որ այժմ և դեռ շատ երկար ժամանակ մեզ համար անկարելի է ձեռք վերցնել մեր հոգևորականությունից և այդ կարծիքը առաջ է գալիս, ոչ այն պատճառով, որ մեզ ծանօթ չեն այն առարկությունները, որոնք անվում են պ. Գ. Կ.-ի յօդուածում կղերականության դէմ. ոչ, մեզ այդ բոլորը շատ լաւ ծանօթ է։ Մենք և անկասկած մեզ հետ շատ ուրիշներ վեզանում, եթէ ոչ մասնագիտօրէն, գոնէ ընդհանրապէս գիտենք, թէ ինչպէս սկիզբն առան կրօնները, ինչպէս զարգացան, ինչ դրական կամ բացասական դեր կատարեցին մարդկության առաջադիմության ընթացքում։ Այնպէս որ Գալիլէյի և Զօրդանօ Բրունօի օրինակները ոչինչ նոր բան չեն կարող ասել մեզ։ Գիտենք թէ ինչ գաղափար ունի կրօնների ապագայի մասին Եւրոպայի առաջնակարգ ինտելիգենցիան։ Գիտենք, որ իրականությունը այդ ապագայից դեռ շատ հեռու է, գուցէ աւելի հեռու, քան նրանց (կրօնների) սկզբնաւորությունից։ Գիտենք որ այն ազգերը, որոնք ինքնուրոյն կեանք են վարում և ուրեմն ժողովրդի ցաւերը դարմանելու համար հազար ու մի միջոցներ կան նրանց ինտելիգենցիայի ձեռքում, աւելի մեծ հեշտությամբ կարող էին միահեղամից դէն շպրտել կըղերին, բայց մինչև այժմ շատ տեղեր կղերի իշխանությունը դեռ չեն կարողացել մինչև անգամ բաժանել մարմնաւոր իշխանությունից (եկեղեցու բաժանումը պետությունից)։ Գիտենք, որ մեր ազգը ինքնուրոյն կեանք շատ քիչ է տեսել և նրա երկար գոյության ընթացքում նրա բազմաթիւ ցաւերն ու դարդերը շատ անգամ ծանրացած են եղել կղերի ուսերին և մեզ ու մեր դրության մէջ գտնվող ազգերին կղերի վերա-

---

տրված են, շարունակեց ռէսը։ Շատերին կենդանի-կենդանի են թաղել։ Ռէս Գրգօն, հայիՖ քեզ, տղամարդ, սպանված է և նրա ողջ տունը ջնջված։ Շատ քչերն են աղատվել լեռներում և անտառներում ծածկվելով. նրանք էլ սովամահ լինելու վրա են։

Տէր-Մարուքը լսում էր այս սոսկալի բօթը՝ մերթ գլուխն օրօրելով, մերթ ծնկներին խփելով, մերթ ախ ու վախ անելով։ Երբ ռէս Պէտօն վերջացրեց աղեխարշ պատմությունը, տիրեց խորին լռություն։ Երկուսն էլ պաշարվեցան ծանր մտքերով. Տէր-Մարուքը նոյն իսկ մոռացել էր իր տէրողորմեան շրխկացնել։

—Ռէս Պէտօ, ընդհատեց տէրտէրը լռությունը, եթէ այդպէս է, մեր բանն էլ դժուար է. Խութն աւերվեց, անցաղթելի Խութն ընկաւ, մենակ ինչ պիտի անէ խեղճ Բանոնը, որ մինչև այժմ Խութի շուաքի տակ է ապրել։ Մեր հարեւան գաղաններն էլ մեզ դաղար չեն տալ. սրանք մինչև այժմ Խութի երկիւղից էին զսպված մնացել, հիմա ամբողջ էլիաթը ոտի կը կանգնի և մեր բանը վատ կը լինի, շատ վատ։ Տէր Աստուած դու խնայես, դու հասնես, վերջացրեց նա աչքերը երկինք ամբառնալով։

—Տէրտէր, առանց Աստուծոյ օգնության ոչ ոք աջողություն չէ ունեցել, բայց մարդն էլ պարտական է իր մասին հոգալ. պէտք է մտածել մի ճար անել։ Լաւ կը լինի՝ մէկէլ աղսախկալներին էլ շուտով խորհրդի կանչենք, մի հրնարք մտածենք ասիանցիների հաւանական յարձակման առաջն առնելու։ Վատ չի լինի, որ Ռաշիդն էլ մասնակցի մեր այս խորհրդին, նա թէև ջահել է, բայց սիրտ ունի, խելք ունի և կարող է օգտակար լինել։ Իսկ դու, տէր հայր,

---

դեռ երկու քայլ չարած օդայի դռանը երևեցաւ Ռաշիդի վայելչակազմ հասակը։

—Աւազակները Մխօի տունը կոխել են, ասում են աղջիկ են փախցրել, գոչեց նա, և առանց որ և է պատասխանի սպասելու, վազեց օդայի պատից քաշ ընկած զէնքերը խլեց, դուրս քաշեց իր Ձերմակը և առանց թամբելու, մէջքին թռաւ և անյայտացաւ խաւարի մէջ, մինչդեռ ողջ գիւղը տակն ու վրա էր եղել, մարդիկ վազում էին դէպի աղմուկի կողմը, նոր զարթնածները վազողներին հարցնում էին բանի էությունը։ Ոչ ոք չիմացաւ թէ Ռաշիդը մեն-մենակ ուր գնաց։

Ռաշիդը գիտէր, որ աւազակները, որտեղից էլ գնալու լինէին, պէտք է Աստուածածնի բլրի տակից անցնեն։ Ուստի մտածեց մի կարուկ ճանապարհով այդ բլրի տակ նրանց առաջը կտրել. սրա համար հարկաւոր էր գետն անցնել, միւս ափով գնալ մինչև բլրի ուղղությունը, և ապա կրկին անցնել և բլրի առաջ դուրս գալ։ Ահա նա արդէն գետի ափումն է, որ գոռում գոչումով հոսում է խաւարի միջից։ Մի բօպէ ջրի աղմուկը, համատարած խաւարը, իր միայնությունը նրան սարսափ ազդեց, և նա կանգ առաւ մտախոհ. բայց մտածելու ժամանակ չը կար, գետի խշշոցն անկարող եղաւ խլացնել գիւղից լսվող բազմաղան ձայները, հարայ-հրոցը և նա ս. Աստուածածնին յանձնելով իրան՝ խթեց ձիու կողքերը. կենդանին սարսափած ջրից ու խաւարից մի վայրկեան յետ-յետ քաշվեց, բայց վերջը հնազանդվելով տիրոջ ցանկությանը՝ մտնչալով ջուրը մտաւ, սաստիկ շրփոց հանելով։ Կրծքից վեր խորասուզված ջրի մէջ, նա հզօր կրծքով դէմ տուեց ալիքներին և սկսեց առաջ գնալ։ Ռաշիդը քաջալերում էր փռնչացնող կենդանուն, յոյսերով բարձր բռնած գեղեցիկ պարանոցը. երկար չը քաշեց այս վտանգաւոր ընթացքը. մի քանի բօպէից յետոյ Ռաշիդն արդէն միւս ափումն էր, և սլանում էր գետի ընթացքով դէպի վար, դէպի բլուրը։ Ահա նա արդէն բլրի առաջն է. կրկին հարկաւոր է գետակն անցնել։ Առաջին փորձից քաջալերված, նա այս անգամ համարձակ քշեց իր ձին և շուտով դուրս եկաւ և բլրի դէմ յանդիման կանգ առաւ։

Նա ձիուն չէր խնայել և համոզված էր, որ գողերն անցած չեն լինի, քանի որ նա անհամեմատ աւելի երկար ճանապարհ էր, քան իր կտրածը և երկրորդ՝ աղջիկ փախցնելն էլ այնքան հեշտ բան չէր, որ նրանք կարողանային իրանից առաջ այստեղից փախած լինել։

Ռաշիդն շտապով վար բերեց հրացանը, քաշեց նրա ոտքը և ճանապարհի մէջ տեղում կանգնած սպասում էր առանց ձիուց իջնելու։ Այդ բօպէում նրան ոչ մի միտք չէր խռովում. ոչ թշնամիների անսպասելի բազմությունը, ոչ իր միայնությունը և ոչ յանդուգն ձեռնարկության բոլոր անաւորությունը։ Նա միայն սարսափում էր այն մտքից, թէ մի գուցէ անօրէններն անցած լինեն և իր բոլոր ջանքերն ապարդիւն անցնեն։ Լսողությունը սրած, նա աչքերը չռել էր խաւարի մէջ, աշխատելով որ և է ստուեր ջոկել, կամ լսել որ և է շշուկ, կամ ձիերի տրոփիւն. սակայն իզուր, միայն գետն էր իր անաւոր աղմուկով դղրդում շրջակայքը՝ զարկվելով Աստուածածնի աւերակ վանքի ժայռոտ հիմքին, որ ցցված էր խաւարի մէջ, որպէս մի վիթխարի քարակոյտ։ Անցան մի քանի բօպէներ, յափտենականության չափ երկար. Ռաշիդը մօտ է յու-

բերմամբ չէ կարելի համեմատել ինքնուրոյն կեանք վարող ազգերի հետ։

Եւ այդ բոլորը և ուրիշ շատ հանգամանքներ ի նկատի ունենալով՝ մենք յայտնեցինք մեր կարծիքը։ Այդ բոլորից պիտի պարզ լինի, թէ ինչպէս մի իտեալիզէնտ, որը իր անձնական ներքին աշխարհայեցողութեամբ ոչ մի կապ չունի կղերի հետ, կարող է, «այնու ամենայնիւ», այդպիսի կարծիք յայտնել։ Դրանով էլ վերջացնում ենք մեր ասելիքը։

Ե. Տէր-Յակոբեանց

## ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Օգոստոսի 18-ին

Օգոստոսի 17-ին Վեհափառ Կաթողիկոսը իր շքախմբի և ճիաւոր քաղաքացիների հետ միասին այցելեց Ագուլեաց եկեղեցին, այնտեղից էլ՝ ռուսաց եկեղեցին, ուր կայսերական տան համար մաղթանք կատարեց և ապա գնաց թուրքաց մզկիթը։ Թուրքերը, ի պատիւ Վեհափառի, փակել էին իրանց խանութները և Վեհափառն անցնելիս՝ «աղ օղ, Հայրիկ» էին բղաւում։ Մզկիթում Վեհափառին դիմաւորեց թուրք հոգևորականութիւնը։ Կաթողիկոսը, ի միջի այլոց, պատուիրեց թուրք հոգևորականութեան, միշտ քարոզել ժողովրդին և դրդել համերաշխ ապրելու միւս ազգութիւնների հետ։ Նոյն օրը Վեհափառի մօտ ճաշկերոյթ կար, ուր հրաւիրված էին՝ գաւառապետը, հոգևորականութիւնը և քաղաքի պատուաւոր անձինք։ Այսօր Կաթողիկոսը այցելեց թեմական դպրոցի թէ հին և թէ նոր շէնքը։ Ինչպէս լսում ենք, Վեհափառը մնալու է այստեղ մի քանի օր ևս, որպէս զի կարողանայ այցելել Գանձասարի, Խօթայ և Սամրասի վանքերը։ Թ.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, օգոստոսի 21-ին

«Մշակ» լրագրի № 148-ի մէջ տպագրված է մի լուր, առնված «ռուս լրագրներից» (միմիայն «Кастій» լրագիրն է հաղորդել այդ լուրը), որ իբր թէ Բագուի մեզ պատկանող նաւթահանքերում կառավարչական տեսչութեան ձեռքով կատարված քննութիւնը պարզել է մի շարք զեղծումներ, այն է՝ որ բանւորները չարունակ անխղճաբար հարստահարվել են մեզանից և թէ տեսչութեան ներկայացրել ենք կեղծ տեսակներ, որի համար և ենթարկվել ենք 1,500 ռուբլի տուգանքի և օրինական պատասխանատուութեան։

Ճշմարտութիւնը վերականգնեցնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում պարզաբանել հետևեալը։ Նախ՝ Բագուի նաւթահանքերում վերջերս ո և է քննութիւն տեղի չէ ունեցել, այլ քննութիւնը կատարվել է մայիսի 7-ին իբրև անմիջական հետևանք կառավարութեան նորերս հրատարակած օրէնսդրութեան, որը վերաբերվում է հանքերի վարչական կազմակերպութեան և կարգ-կանոններին։ Այդ հրահանգի համեմատ՝ անորոշ ժամանակով վարձված բանւորները ռոճիկ պիտի ստանան երկու շաբաթը մի անգամ, իսկ մեզ մօտ նրանք ստացել են ամիսը մի անգամ, ինչպէս եղել է անցեալ տարիներին և ինչպէս ընդունված է ընդհանրապէս Բագուի հանքերում։ Երկրորդ՝ օրէնքը տրամադրում է, որ բանւորների անուանական ցուցակը պարունակէ իր մէջ հետևեալ մանրամասնութիւնները. բանւորի ծննդեան տեղը՝ նահանգ, գաւառ, գիւղ, բնակութեան տեղը և ապա այն հաստատութեան անունը, որից անցագիր է տրված, մինչդեռ մեր մատեանում այդ տեղեկութիւնները մասամբ թերի են եղել արձանագրված։ Անկասկած դրանք ոչ թէ զեղծումներ են, այլ միայն չեղումն օրէնքից, որը նոր է հրատարակված, և որն արդէն գործ է դրվում։

Իբրև ապացոյց՝ սրա հետ միասին ներկայացնում ենք երեք փաստաթուղթ, երկուարձանագրութիւն վերը յիշված կէտերի վերաբերմամբ և մի վկայագրութիւն նահանգական ինժենէրից, որը կատարելապէս վաւերացնում է՝ թէ տեսչութեան ձեռքով կազմած արձանագրութիւնների մէջ բառ առ դամ չը կայ կեղծ տետրակների կամ կեղծիքի մասին։ Ենթադրում ենք, որ այդ անհերքելի փաստաթղթերը միանգամայն բաւական են ամեն տեսակ կասկածներ փարատելու համար։

Եղբ. Յովհաննեանց

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Պարտաւորութիւն ենք համարում հաղորդել ի գիտութիւն հայոց հասարակութեան հետևեալ տեղեկութիւնները պրոֆէսոր Անդրէաս Արծրունու մասին, որ այժմ գտնվում է Հօհենհէյնֆիում, ուր գնացել է բժշկվելու նպատակով։ Մենք դեռ անցեալ տարի, երբ պ. Արծրունին Թիֆլիս եկաւ, հաղորդեցինք որ նա տկար է և բժշկվելու համար այստեղից ճանապարհվեց Շվեյցարիա։ Մի տարուց աւելի է, որ յարգելի պրոֆէսորը, հիւանդութեան պատճառով, դադարեցրել է դասախօսութիւնները Ախէնի պօլիտեխնիկումի մէջ։ 1894 թ-ին Արարատ սարը բարձրանալը, և ապա Ամերիկա ճանապարհորդելը, ուր նա ստացաւ տեղական տենդ, վատ ազդեցին պ. Արծրունու առողջութեան վրա, իսկ անցեալ 1897 թ-ին, գեօլոգների հետազօտութիւններին մասնակցելու նպատակով Ուրալ գնալը՝ մի նոր հարուած տուեց արդէն խախտված առողջութեան, այնպէս որ իր լուրջ հիւանդութիւնը դադարեցնելու համար նա ստիպված է ամբողջ ժամանակը բժշկութեան ենթարկվել։ Անցեալ յուլիս ամսին «Մշակի» խմբագրութեան ցանկութեամբ, մեր խմբագրութեան անդամ պ. Յովհաննէս Տէր-Մարկոսեան ուղևորվեց Եւրոպա՝ այցելելու պ. Արծրունուն, և առաջարկելու նրան, եթէ հնարաւոր է, Կովկաս վերադառնալ, մի բան, որ կազմում է ոչ միայն մեր խմբագրութեան, այլ և հայոց հասարակութեան ջերմ փափագը։

—

Մենք հաղորդել էինք, որ Արարատ, Արագած, Էլբրուս և ուրիշ լեռներ բարձրացող պ. Պաստուխով մտադիր էր այս ամառ հետազօտել այն սառցակոյտը, որից բղխում է Մալկա գետը։ Պաստուխով հիւանդութեան պատճառով չը կարողացաւ իրագործել իր դիտաւորութիւնը, իսկ նրա հետ արշաւանք կատարելու համար պայմանաւորված անձինք, այն է պ.պ. Տիմոֆէեվ, Մելենչուկ և Կիւրայեվ, բարձրացան սառցակոյտի վրա և արեցին մի քանի թուղթի դիտողութիւններ։ Սառցակոյտը գտնվում է Կովկասեան գլխաւոր լեռնաշղթայի վրա։ Նրա մակերևոյթը մօտ 12½ հազար ոտնաչափ բարձր է ծովի մակերևոյթից։ Սառցակոյտը մեծ տարածութիւն ունի և շարժվում է շատ դանդաղ։

—

Տեղական լրագրները հաղորդում են, որ Կովկասի կառավարչապետը թոյլատրել է դուխոբօրներին, որոնք այժմ հաւաքվել են Բաթումում, արտասահման՝ Կիպրոս կղզին գաղթելու համար, վերցնել իրանց հետ մի անգլիագէտ անձն, ճանապարհին թարգմանի պաշտօն կատարելու համար։ Կառավարչապետի դիւանատունը բացատրել է նահանգապետներին, թէ որովհետև դուխոբօրները թոյլտուութիւն են ստացել գաղթել արտասահման, ուստի առանց ո և է դժուարութեան պէտք է նրանց անցագիր տալ, բացի այն դուխոբօրներից, որոնք դեռ չեն վերջացրել իրանց զինուորական ծառայութիւնը։

—

Թիֆլիսը, ինչպէս յայտնի է, շուտով պէտք է ունենայ իր գլխաւոր փողոցներում էլեկտրական լուսաւորութիւն։ Այդ փողոցների թւումն են Գօլովինսկի պրոսպէկտը, Մէքայէլեան փողոցը, Սօլդատսկի բազարը, վօդզալ տանող փողոցներից մէկը և կամուրջները։ Բացի դրանից էլեկտրական լամպաներ պէտք է, յայտնի վճարով, շինվեն մասնաւոր մարդկանց համար։ Կարծում են, որ մասնաւոր լամպայի գինը կը լինի մօտաւորապէս 20 ռուբլի։ Դա թանդ չէ և շատերը, անկասկած, կաշխատեն իրանց տներում ունենալ այդպիսի էլեկտրական լուսաւորութիւն։ Քաղաքային ուպրաւան ներկայումս ստացել է զանազան էլեկտրական ընկերութիւններից առաջարկութիւններ, որոնցից մի քանիսը շատ ձեռնտու են։ Ուպրաւան իր ժողոված տեղեկութիւնների հիման վրա եկել է այն եզրակացութեան, որ էլեկտրական լուսաւորութիւն մտցնելը Թիֆլիսում ոչ միայն աւելի ծախսեր չի պահանջի, այլ և կարող է ժամանակով բոլորովին ծածկել իր ծախսերը՝ մասնաւոր մարդկանցից ստացած եկամուտներով։

—

Հաջիբենդի մօտ կատարված յանդուգն աւազակութեան դէպքի գլխաւոր հերոսն ու աւազակապետը, ինչպէս յայտնվում է այժմ, եղել է մի թուրք՝ Նաբի Նաչաֆ-օղլի անունով։ «Новое Обозрѣніе» լրագրին հաղորդում են, որ Ղազախի գաւառապետ, Կանչելու ջանքերով՝ Նաբի Նաչաֆ-օղլին սպանվեց Աղստաֆա գիւղում. սպանվել է իր տան մէջ և աւազակ Խեչօ Եվինով։ Մնացածներին ոստիկանութիւնը դեռ չէ կարողացել բռնել, բացի մէկից, որ նոյնպէս սպանվել է հրացանագրութեան ժամանակ։ Սպանվածների մօտ գտել են կողոպտված իրերի մի մասը։

—

Պետերբուրգի և Մոսկվայի մէջ հաստատված է տելեֆոնային հաղորդակցութիւն։ Մասնաւոր մարդկանց համար տելեֆոնը կը բացվի առաջիկայ սեպտեմբերի 1-ից։

—

«Кастій» լրագիրը հաղորդում է, որ Բագուի տեղական իշխանութիւնը առաջարկեց այնտեղ ապրող մօլոկաններին, որ այսուհետև նրանք ծնվածների, մեռածների և կատարվող ամուսնութիւնների մասին իմաց տան իշխանութեան։ Բացի դրանից, մօլոկաններին ստորագրութեամբ պարտաւորացրել են թաղման և յուղարկաւորութեան ժամանակ սաղմոսներ չերգել։

—

ԶԱՆԳԵԶՈՒՐ գաւառի Արծուանիկ գիւղից մեզ գրում են. «Օգոստոսի 5-ին Շուշու Բարեգործական ընկերութեան վարչութեան միջոցով ստացվեց պղնձահանքերում Գիւղատնտեսական ընկերութեան այն 600 ռուբլին, որ պէտք է բաժանվի 1897 թ-ին Զանգեզուրի անբերրիութիւնից վնասված գիւղացիներին։ Այդ նպատակով չորս անձերից կազմված յանձնաժողովը վճռել է այս գումարը գործադրել ամսիս վերջին, երբ գիւղացիք կը վերջացնեն հացահատիկների ժողովելը։ Յանձնաժողովը աւելի նպատակայարմար է համարել, որ փողերը բաժանվեն դրամով և ոչ պաշարեղէնով, ինչպէս ցոյց է տուել Գիւղատնտեսական ընկերութեան խորհուրդը։ Նպաստներ պիտի բաժանվեն առանց ազգութեան խտրութեան։ Ցաւելով պիտի ասենք, որ գիւղացու յոյսերը փշրվեցին. սկզբում նա սպասում էր առատ հունձ, բայց երկարատև երաշտը նուազացրեց հացաբոյսերի աճումը, այնպէս որ այս տարվայ հունձը կարելի է միջակից ցածր համարել։ Գիւղացիները երկիւղ են կրում, որ անցեալ տարվայ նեղութիւնը կը կրկնվի»։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԼՈՑՍԸ ԱՒԵԼԱՆՈՒՄ Է

—

Երէկ հեռագիրը մի շատ կարևոր լուր բերեց Պարիզից։ Գնդապետ Անրի խոստովանեց, թէ ինքն է գրել այն թուղթը, որի մէջ ամբողջովին յիշատակված է Դրէյֆուսի անունը։ Դա այն դոկումենտն է, որը զինուորական մինիստր Կավենեակ անցեալ յունիսին կարդաց պարլամենտում իբրև մի շատ խոշոր ապացոյց՝ թէ Դրէյֆուսի յանցանքը որ և է կասկածի չէ ենթարկվում։ Այժմ յայտնի է դառնում որ այդ դոկումենտի հեղինակը գնդապետ Անրին է։

Բայց ով է Անրի։ Ընդհանուր շտաբի մէջ մի շատ կարևոր հիմնարկութեան գլխաւորը։ Առաջ այդ պաշտօնը վարում էր գնդապետ Պիկար, որ, ինչպէս յայտնի է, ճշմարտութիւնն էր ուզում պաշտպանել Դրէյֆուսի գործում։ Զօլայի դատի ժամանակ Անրի վկաների թւումն էր։ Նա ասաց որ հիւանդ է, տուեց ցուցմունքներ և բացարձակ կերպով յայտարարեց, թէ Պիկար սուտ է խօսում։ Այժմ գուցէ մասամբ հասկանալի կը լինի, թէ ինչից էր առաջացել քաջ գնդապետի յանկարծական հիւանդութիւնը։ Ընդհանուր շտաբի պետը էնիս, իմ ասլան, գոռում էր տարաբախտ կինը բազմութեան մէջ Ռաշիդին փնտրելով։

Բայց Ռաշիդը չը կար։ Ընդհանուր շփոթութեան մէջ ոչ ոք չէր յիշում, այժմ միայն ամենքն էլ նկատեցին, որ Ռաշիդը չը կայ և զարմացան, որովհետև այսպիսի ժամանակ նա տանը նստել չէր կարող։

Հասան Տէր-Մարուքն ու ռէս Պէյսոն։

—Տէրտէր, ո՞ւր է Ռաշիդը, դիմեցին նրան մի քանի ձայներ միասին։

—Ռաշիդը զըմմէնէն առաջ վազեց. մագեար նա էսայ տեղ չէ. էսմալի հաւարին հասէք, նա նրանց յետևից է ընկել մենակ։ Ա՛խ, անզգոյշ տղայ,—ասաց տէրտէրը ծնկներին տալով—դէ՛ շուտ հա՛, շարունակեց նա. անօրէնները շատ կը լինեն, իմ տունը կաւերեն և էսօր մէկի տեղ երկու դաղ կը քաշեն մեր սրտին. դէ, շո՛ւտ հասէք։

Երիտասարդները շփոթված առաջ վազեցին։ Բայց դեռ գիւղից չէին դուրս եկել, որ նրանց հանդէպ դուրս եկաւ Ռաշիդը աղջկան ձիու վրա դրած, իսկ կապված աւազակին առաջն արած։ Ո՞վ կը սպասէր. ուրախութիւնն ընդհանուր եղաւ։ Մայրն ու փոքրիկ երեխաները վրա պրծան փաթաթվեցին Սալբիին, որ մօր գրկի մէջ յուզմունքից մարեց։ Մի քանիսը խանձարուրով պատեցին Միսօի գլուխը, իսկ բազմութիւնը շրջապատեց աւազակին և Ռաշիդին։

—Տղերք, դարձաւ Ռաշիդը դէպի բազմութիւնը, երևում է, որ այս շները մեզ վրա ոտք են վերցրել. ո՞վ էր տեսել ասիանցին սիրտ անի, Բանոնից աղջիկ փախցնի։ Տօ, սրանք մեր գառանը սիրտ չեն արել մօտենալ. սրանց մի լաւ թէ ճարրմ դու էնիս, իմ ասլան, գոռում էր տարաբախտ կինը բազմութեան մէջ Ռաշիդին փնտրելով։

Բայց Ռաշիդը չը կար։ Ընդհանուր շփոթութեան մէջ ոչ ոք չէր յիշում, այժմ միայն ամենքն էլ նկատեցին, որ Ռաշիդը չը կայ և զարմացան, որովհետև այսպիսի ժամանակ նա տանը նստել չէր կարող։

Հասան Տէր-Մարուքն ու ռէս Պէյսոն։

—Տէրտէր, ո՞ւր է Ռաշիդը, դիմեցին նրան մի քանի ձայներ միասին։

—Ռաշիդը զըմմէնէն առաջ վազեց. մագեար նա էսայ տեղ չէ. էսմալի հաւարին հասէք, նա նրանց յետևից է ընկել մենակ։ Ա՛խ, անզգոյշ տղայ,—ասաց տէրտէրը ծնկներին տալով—դէ՛ շուտ հա՛, շարունակեց նա. անօրէնները շատ կը լինեն, իմ տունը կաւերեն և էսօր մէկի տեղ երկու դաղ կը քաշեն մեր սրտին. դէ, շո՛ւտ հասէք։

Երիտասարդները շփոթված առաջ վազեցին։ Բայց դեռ գիւղից չէին դուրս եկել, որ նրանց հանդէպ դուրս եկաւ Ռաշիդը աղջկան ձիու վրա դրած, իսկ կապված աւազակին առաջն արած։ Ո՞վ կը սպասէր. ուրախութիւնն ընդհանուր եղաւ։ Մայրն ու փոքրիկ երեխաները վրա պրծան փաթաթվեցին Սալբիին, որ մօր գրկի մէջ յուզմունքից մարեց։ Մի քանիսը խանձարուրով պատեցին Միսօի գլուխը, իսկ բազմութիւնը շրջապատեց աւազակին և Ռաշիդին։

—Տղերք, դարձաւ Ռաշիդը դէպի բազմութիւնը, երևում է, որ այս շները մեզ վրա ոտք են վերցրել. ո՞վ էր տեսել ասիանցին սիրտ անի, Բանոնից աղջիկ փախցնի։ Տօ, սրանք մեր գառանը սիրտ չեն արել մօտենալ. սրանց մի լաւ սանատվելու. նա արդէն հակված է հանդգնելու, որ աւազակներն արդէն անցել են. այդ միտքը և՛ սարսափեցնում և՛ կատաղեցնում է նրան. նա մտածում է նոյն իսկ ձիու բերանը յետ դարձնել և քշել նրանց յետևից. ձերմակն արագընթաց է, նա կը հասնի նրանց։ Յետոյ այս միտքը թըւաց նրան չափազանց յանդուգն և հրէշաւոր։ Նայեց աւերակ մենաստանին և ակամայից երեսը խաչակնքեց խորին երկիւղածութեամբ։ Այսպէս էր նա միշտ, ցերեկ թէ գիշեր, չէր կարող այս սրբավայրերի մօտից անցնել՝ առանց երեսը խաչակնքելու։ Նա մի ակամայ երկիւղ էր զգում, երբ մօտենում էր այս բլրին. ինչ էր այս երկիւղի պատճառը, նա մինչև այժմ որոշել չէր կարողացել։ Նա յիշում էր, որ մանուկ հասակում, իր քահանայ հայրն ստիպում էր նրան խաչակնքել, սրբավայրի առաջից անցնելիս և այն ժամանակից նա սովորել էր խաչակնքել երեսը։ Բայց ինչով բացատրել այդ երկիւղը. սա կրօնական երկիւղածութիւն չէր, որ համակում էր նրա սիրտը. սա սարսափ էր, նման այն սարսափին, որ մանուկներն զգում են աւերակների մօտից անցնելիս, որոնք նրանց կարծիքով դևերի, չարքերի բնակարաններ են։ Մանկական հասակում այսպիսի մի երկիւղը շատ բնական կը լինէր, իսկ այժմ. սա ինչ տխուր չարագուշակ երկիւղ է, որ տիրում է նրա անվախ սրտին, ամեն անգամ այստեղից անցնելիս. բայց նա չը կարողացաւ այս հարցերի պատասխանը տալ, խաւարի մէջ լսվեցին ձիու տրոփիւն և մի սրատաքրտոք նուաղած ձիչ, որ մերթ ընդհատվում և մերթ լսվում էր աւելի ու աւելի մօտենալով. այլ ևս ոչ մի կասկած չը կար, որ նրանք են։ Հրացանն ուղղեց. բայց հէնց այն րոպէին, երբ կամեցաւ արձակել, կրակն կանգ առաւ, նրան սարսափեցրեց այն միտքը՝ իսկ եթէ իր գնդակը հէնց խղճալի աղջկան դիպչի, և ստիպված հրացանի բերանը դէպի վար, դէպի եկողների ոտները ուղղեց. հրացանը տրաքեց, գնդակն անախորժ վզզոցով անցաւ խաւարը պատռելով դէպի մօտեցող երեք ստուերները և նրանցից մէկը գետին գլորվեց։ Ռաշիդն առաջ արշաւեց։

—Կացէ՛ք, անօրէններ, որոտաց նա խաւարի միջից, Ռաշիդը դեռ կենդանի է։

Այս անաւոր անունը, յանկարծակի և անսպասելի կողմից հրացանագրութիւնը, մէկի թաւալգոր ընկնելը, սարսափով պատեց ասիանցիներին և նրանցից երկուսը թողնելով յափշտակած կիսամեռ աղջիկը իրանց ընկած ընկերի մօտ, իրանք անյայտացան՝ դաշտի հակառակ կողմը փախչելով։ Մօտենալով՝ Ռաշիդը գտաւ աւազակին կենդանի, բանից դուրս եկաւ, որ սրա ձին էր սպանվել, անկարող դարձնելով նրան փախչել։ Անօրէնը գթութիւն էր խնդրում... Քիչ յետոյ Ռաշիդն աւազակին առաջն արած և կիսամեռ աղջկան ձիու վրա դրած դիմեց գիւղ։

Գիւղը ոգի մէջ էր։ Ամենքը վազեցին դէպի Միսօի տունը և այնտեղ հետևեալ տեսարանը ներկայացաւ նրանց աչքին։ Միսօն՝ սրի մի հարուած ընդունելով գլխին, ընկել էր բակի մէջ արիւնլուայ. մանր երեխաները մօրը կորցրած ճտերի պէս, խեղճ ու կրակ վայում էին. իսկ նրանց մայրը, ամուսնու կողքին կծկված մաղերը փետելով, ծնկները ծեծելով, գլխին տալով պոռում էր.

—Եաման աղջիկ, քրիստոնեայ էք, խասէք։ Ռաշիդ ջան, մեռնեմ քեզի, քեզ ոտաց հէյրան, թէ ինչ դարդ դու էնիս, իմ ասլան, գոռում էր տարաբախտ կինը բազմութեան մէջ Ռաշիդին փնտրելով։

Բայց Ռաշիդը չը կար։ Ընդհանուր շփոթութեան մէջ ոչ ոք չէր յիշում, այժմ միայն ամենքն էլ նկատեցին, որ Ռաշիդը չը կայ և զարմացան, որովհետև այսպիսի ժամանակ նա տանը նստել չէր կարող։

Հասան Տէր-Մարուքն ու ռէս Պէյսոն։

—Տէրտէր, ո՞ւր է Ռաշիդը, դիմեցին նրան մի քանի ձայներ միասին։

—Ռաշիդը զըմմէնէն առաջ վազեց. մագեար նա էսայ տեղ չէ. էսմալի հաւարին հասէք, նա նրանց յետևից է ընկել մենակ։ Ա՛խ, անզգոյշ տղայ,—ասաց տէրտէրը ծնկներին տալով—դէ՛ շուտ հա՛, շարունակեց նա. անօրէնները շատ կը լինեն, իմ տունը կաւերեն և էսօր մէկի տեղ երկու դաղ կը քաշեն մեր սրտին. դէ, շո՛ւտ հասէք։

Երիտասարդները շփոթված առաջ վազեցին։ Բայց դեռ գիւղից չէին դուրս եկել, որ նրանց հանդէպ դուրս եկաւ Ռաշիդը աղջկան ձիու վրա դրած, իսկ կապված աւազակին առաջն արած։ Ո՞վ կը սպասէր. ուրախութիւնն ընդհանուր եղաւ։ Մայրն ու փոքրիկ երեխաները վրա պրծան փաթաթվեցին Սալբիին, որ մօր գրկի մէջ յուզմունքից մարեց։ Մի քանիսը խանձարուրով պատեցին Միսօի գլուխը, իսկ բազմութիւնը շրջապատեց աւազակին և Ռաշիդին։

—Տղերք, դարձաւ Ռաշիդը դէպի բազմութիւնը, երևում է, որ այս շները մեզ վրա ոտք են վերցրել. ո՞վ էր տեսել ասիանցին սիրտ անի, Բանոնից աղջիկ փախցնի։ Տօ, սրանք մեր գառանը սիրտ չեն արել մօտենալ. սրանց մի լաւ խրատ պէտք է տալ, այ էս շան գլուխը ջախջախենք, ձգենք գետը տանի, որ էլ ոչ մէկը սիրտ չանէ էն սարերից դէսն անցնել։ Դէ՛հ, կապեցէք սրան սայլից։ Մի քանի երիտասարդներ վայրկենապէս բռնեցին և դէպի սայլը քաշ տուին աւազակին. վերջինս ճչում էր, լաց լինում, նրանց բախտին դիմում, աղերսում, որ խնայեն իրան։

—Կացէ՛ք, մէջ մտաւ տէրտէրը, Ռաշիդ, զաւակս, թող չարն անցնի, արիւն մի թափէք. նրանք արին, դու մի արա, փառք տանք Աստծուն, որ նրանց չարութիւնը չը յաջողվեց. գլուխը քարը, թող կորչի երթայ, ժամանակը չար է...

—Տէրտէր, չեմ սպանի, լսում եմ քեզ, բայց պէտք է այնպէս խրատեմ, ինչպէս որ դու մեզ խրատում էիր, երբ դաս էիր տալիս։ Տղերք, այս շանը կապեցէք սայլից գլխի վայր։ Մի բօպէ չանցած ասիանցի աւազակը գլխի վայր կախված ճօճում էր սայլի յետին մասում և Ռաշիդը կարող ձեռքով անխնայ ճիպոտի հարուածներ էր տալիս նրա մերկ ոտներին ու մարմնին.—նա գոռում էր, տնքում, վայում, աղաչում, որ խընայեն, բայց հարուածները տեղում էին ու տեղում։

—Բաւական է, վերջապէս, գոռացին տէրտէրը և ռէսը, թող տուէք կորչի երթայ։

Աւազակին արձակեցին, նա հազիւ էր ոտների վրա կանգնում, և օրօրվելով հեռացաւ։ Բազմութիւնն սկսեց ցրվել, և երկար չանցած գիւղում կրկին տիրում էր գիշերային խաղաղութիւնը։

(Կը շարունակվի)

բի բոլոր գեներալների աջակցութիւնն ու հովանաւորութիւը վայելող այդ օֆիցէրը ուրիշ մի բան չէր, եթէ ոչ կեղծ դոկումենտ չինող։ Այժմ խայտառակութիւնը կատարեալ է։ Ամբողջ Ֆրանսիան միաբան երկրպագում է զօրքին և պատրաստ է խաչ հանել նրանց, որոնք կարծում են թէ զօրքի մէջ էլ կարող են լինել անբարոյական մարդիկ։ Այդ միտքը ամենածանր յանցանք էր համարվում։ Եւ ահա գնդապետ Անրի բաց է անում ֆրանսիական ազգի աչքերը և հաստատում է որ լինել զինուորական՝ չէ նշանակում լինել հրեշակ։

Լոյսը աւելանում է։ Դրէյֆուսի դժբախտ գործը հանդէս է գալիս իբրև մի մեծ անարդարութիւն։ Զինուորական բարձրագոյն հիմնարկութեան մէջ կեղծ թղթեր են շինվում այդ անարդարութիւնը հաստատելու համար։ Բայց յանկարծ բացվում է խայտառակութիւնը. և այսուհետև Դրէյֆուսի դէմ եղած բոլոր փաստերի վրա կասկածի ծանր ստուեր է ընկել։ Զուր չէր ասում Էմիլ Զօլան, թէ Ֆրանսիան ապագայում չնորհակալ պիտի լինի իրանից, որ պարզում է ճշմարտութիւնը։ Այդ ապագան շատ շուտ եկաւ՝ իր ջախջախիչ փաստերով...

## ՖՐԱՆՍԻԱ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ֆրանսիական մամուլը վերջերումս շատ է զբաղվում այն հարցով, որ Ռուսաստանը՝ իր ամբողջ ուշադրութիւնը դարձնելով ծայրագոյն Արևելքի վրա, կարող է այնքան առաջ գնալ, որ կը սկսի շատ քիչ հեռաքրքրվել արևմտեան Եւրոպայի գործերով և մեծ նշանակութիւն չի տայ ռուս-ֆրանսիական միութեան։ «Radical» լրագրի մէջ պատգամաւոր Մարէ այդ առիթով գրում է. «Հանուսս չը նախատեսեց այս բոլորը։ Նա հպարտանում էր նրանով, որ Ֆրանսիան և Ռուսաստանը յետ քաշեց Յունաստանից և Հայաստանից և ենթադրեց թէ մեծ քաջութիւն գործեց, հարկադրելով Ֆրանսիան մտնել եւրոպական կռուցերաի մէջ, որի զեկավարն է գերմանական կայսրը։ Եթէ ծայրագոյն Արևելքում Անգլիան օգնէր Եապոնիային, կը ծագէր պատերազմ և եթէ նրա ելքը անաջող լինէր, ֆրանսիական նաւատորմը և ֆրանսիական կօլոնիաները կընկնէին յաղթողի ձեռքը։ Իսկ եթէ Անգլիան թողնէր Եապոնիան առանց օգնութեան, ռուսաց քաղաքականութիւնը, այնու ամենայնիւ, թշնամական կը լինէր այդ երկու պետութիւնների վերաբերմամբ, իսկ Եւրոպայում ռուս-ֆրանսիական դաշնակցութիւնը կը դառնար սպառնալիք Լօնդօնի համար և ոչ թէ Բերլինի համար։ Այդպէս էլ եղաւ։ Ահա ինչ օրի հասանք։ Այսուհետև մենք պիտի բռնենք Գերմանիայի և Ռուսաստանի կողմը Անգլիայի դէմ, որ մեծ սխալ է։ Գերմանական կայսրը, օգտվելով մեր բարի բարեկամ Ռուսաստանի միջնորդութիւնից, մեր գլխին խաղ է խաղում։ Նա աւելի և աւելի երևան է գալիս համաշխարհային միապետի, ամբողջ աշխարհի միջնորդ դատաւորի դերում։ Նա արդէն թագաւորում է Արևելքում, ուր մենք առաջ ամեն ինչ էինք, իսկ այժմ ոչնչութիւն դարձանք։ Այն հովանաւորութիւնը, որ երբեմն մեզ էր պատկանում, այժմ անցաւ նրա ձեռքը։ Սուլթանը դարձաւ նրա փոխարքան։ Շուտով նա կը գնայ Երուսաղէմ և կը տիրապետէ սուրբ տեղերին, որից յետոյ ասիացիների հայեացքները կուղղվեն դէպի Գերմանիա։ Մինչդեռ Ռուսաստանը ահագին ծախսերի տակ է և չէ կարողանում վերջացնել Սիբիրի ճանապարհը, գերմանացիները, արդէն տէր լինելով Փոքր-Ասիայում, կառուցանում են իրանց երկաթուղին, որը կը միանայ Համբուրգ-Սալոնիկի գծի հետ, և այդպիսով համաշխարհային առևտուրը կանցնի գերմանական ձեռքերը։ Գերմանիան այս կերպով հեռացնում է իր երկու հակառակորդներին և երկուսին էլ թուլացնում է»։

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Վիլհելմ կայսրը ամեն տեսակ բարեկամական խորհուրդներ է տալիս սուլթանին։ Նա ներշնչել է սուլթանին այն միտքը, թէ միակ միջոցը զսպելու Բալկանեան մանր պետութիւնների՝ Բոլգարիայի, Սերբիայի, Յունաստանի և Չերնոգորիայի ձգտումները, ինչպէս և թոյլ չը տալու Ռուսաստանին միջամտել Թիւրքիայի գործերին, զօրքի կազմակերպութեան համար մի առանձին ֆոնդ ունենալն է։ Այժմ սուլթանը ամեն ջանք գործ է դնում այդ ֆոնդը հաստատելու։

—Գերմանական ազատ մտածողների պարագլուխ Ռիխտէր սպառնալիութեան համար ձեռնարկած նոր ծախսերի վերաբերմամբ բողոք յայտնեց և ասաց. «Մենք վճռական կերպով դիմադրելու ենք նոր սպառազինութիւնների ծրագրին, եթէ մինչև իսկ դրա հետևանքը լինի պարլամենտի լուծումը»։

—«Ռէյտերի գործակալութիւնը» հաղորդում է, որ հնդկական ժանտախտը տարածվում է։ Պաշտօնապէս յայտարարված է, որ ժանտախտ երևացել է հարաւային Հնդկաստանում։ Բոմբէյ քաղաքում, որտեղ երկու տարի է չէ դադարում ժանտախտը, վերջին շաբաթվայ ընթացքում մեռել են 162 հոգի։

## „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՍՊԱՍՕՎ ՍԿԻՏ, 21 օգոստոսի։ Օգոստոսի 20-ին, ցերկվայ ժամի 12-ին հասաւ Կայսերական գնացքը Նոցա Մեծութիւնների, Մեծ Իշխանուհիներ Օլգա Նիկոլաեվնայի և Տատիանա Նիկոլաեվնայի հետ։ Պատգամաւորութիւնը ներկայանալուց յետոյ Նոցա Մեծութիւնները զանգահարութեան և որոտալից «ուրաների» ուղեկցութեամբ գնացին տաճարը։ Մաղթանքից յետոյ համբուրելով խաչը, Նոցա Մեծութիւնները՝ ժողովրդի ցնծագին «ուրաների» և զանգահարութեան ուղեկցութեամբ, ժամի մէկին ճանապարհվեցան դէպի Կրիմ։

ՊԱՐԻԶ, 21 օգոստոսի։ Ընդհանուր շտաբի գլխաւոր Բուադէֆր, Անրիի գործի պատճառով, հրաժարական տուեց։ Կավենեակ ընդունեց հրաժարականը։ Շտաբի գլխաւոր նշանակված է գեներալ Ըշեուար։

ՊԱՐԻԶ, 21 օգոստոսի։ Գնդապետ Անրի Մոնվալերիէնում ինքնասպանութիւն գործեց, կըտրելով իր կոկորդը։—Հնարաւոր է, ասում է «Figaro», որ պարլամենտը շուտով արտակարգ նիստի կը հրաւիրվի։ Խօսում են մինչև իսկ մի մեծ քննիչ մասնաժողով կազմակերպելու մասին։ —Քննութիւնը հաստատեց, որ Անրիի մահը վայրկենական էր։—«Temps»՝ Դրէյֆուսի գործի վերաքննութեան նուիրած յօդուածում, ասում է. «Կավենեակ կը վերջացնի իր գործը և կը պահանջէ Սարվէնից ոչնչացնել 1894 թուի վճիռը։ Որքան շուտ սկսվի վերաքննութիւնը, այնքան լաւ կը լինի։»

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


**Մ. Ա. ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ**
(Ծն. Աբղութեան)
**ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԵՐԵԽԱՆԵՐ**
միատեղ ուսուցանելու և պատրաստելու միջնակարգ դպրոցների ստորին դասարանների համար։ Պայմանների համար պէտք է դիմել սեպտեմբերի 1-ից, առաւօտեան 10—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը այս հասցէով՝ Կոնսուլսկայա, № 28, կամ Գուդովիչ փողոց, № 9, տուն ճարտարապետ Փեթօևի։ (չ. հ. չ. ե. հ.) 1—5

**Պատուաւոր մի ընտանիք**
ցանկանում է գիշերօթիկ աղջիկ և տղայ պահել։ Տղայքը 10—14 տարեկան լինեն։ Հասցէն՝ Բէյղեհէմսկայա փող., № 1, տուն Թադէոսեանցի։ 1—2

**Մի** պարոն ունի ԺՈՂՈՎԱԾՈՒ ԳՐՔԵՐԻ, —65 հատ գրքեր, 110 հատ բրօշիւրներ և 210 հատ ամսագիրներ։ Բացի դրանից 19 տարվայ «Մշակ» լրագրի բոլոր համարները (1878 թուից մինչև 1896 թիւը). այս բոլորը ցանկանում է վաճառել։ Խնդրում է հայ հարուստներից, որ գնեն և ընծայեն Երուսաղէմի կամ Էջմիածնի կամ մի որ և է գաւառական դպրոցարանի։ Դրանով գնողները համ իրանց համար բարի յիշատակ կը թողնեն, համ էլ պարոնին իր նեղդրութիւնից կազատեն, որովհետև շատ ժամանակ անգործ մնալուց՝ չքաւորութեան մէջ է ընկել։ Հրաւիրվում է Բագուի Մարդասիրական ընկերութեան և Թիֆլիսի Բարեգործական ընկերութեան խորհրդի անդամների ուշադրութիւնը։ Գրքերի և բոլոր լրագրների ընդհանուր գինն է 300 ռուբլի։ Դիմողներին կարելի է զիջումն անել։ Պիտի դիմել այս հասցէով. ԹԻՖԼԻՍ, Երևանեան հրապարակ, Թամամշովի քարվանսարայի դիմաց լիմոնադ ծախող Առաքել Խաչատուրեանցին։ 3—3

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ
Գ. ԷՔԵՐՍԻ
**ՄԱՐԴԵՄ**
(Homo sum)
Վէպ։ Գերմաներէն բնագրից թարգմանեց
Ստ. Մալխասեանց
428 երես։ Գինը 1 ռուբլի։ Դիմել՝ Тифлисъ. Армянское Издательское Общество.
(չ. չ.) 9—20

**ԴՊՐՈՑ-ՊԱՆՍԻՕՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ**
**Ս. Վ. ԱՐԳՈՒԹԵԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ**
Երեխաների ընդունելութիւնը—օգոստոսի 20-ից։ Ուսումը կը սկսվի սեպտեմբերի 1-ից։ (19, 22, 29) 2—3

**ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ**
յայտնում է, որ նրա ատեանում, օգոստոսի 28-ին, ցերեկվայ 12 ժամին, նշանակված է ԱՃՈՒՐԴ, կապալով տալու զանազան մթերքների մատակարարելը, այն է՝ ԳԱՐԻ 70,000 պուդ, ԽՈՏ 60,000 պուդ և ԴԱՐՄԱՆ 30,000 պուդ։ Պայմանաւորվել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը Ուպրավայի Շինարարական մասում, բոլոր լի օրերը, 9—1 ժամը։ 3—3

**ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ**
**ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ**
Աշակերտների ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ կը սկսվի օգոստոսի 22-ից։ ՈՒՍՈՒՄԸ կը սկսվի սեպտեմբերի 1-ից։ Հասցէն՝ Սօլօլակ, Սադովայա փողոց, № 46. 2—10

**ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ**
ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ
**ՏԱՍՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ**
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռքի ուղղելը։
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը, և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Ալէքսանդր Փրիդօնովի տանը, № 9, Սերգիեվսկայա և Նադօրնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղը. Ծովիանօվների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. հ.) 20—25

**ՕՐ. Ե. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ**
**ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԸ**
ՏԵՂԱՓՈԽՎՈՒՄ Է Սադովայա փողոց, տուն Շադինեանի № 38 (Դանօվսկայա փողոցի դիմացը)
ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ երկու սեռի երեխաներ և ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ՝ գիմնազիա, ռէալական և այլ դպրոցներ մտնելու համար։ Ընդունելութիւնները՝ օգոստոսի 20-ից։ 3—10

*Ֆինանսների մինիստրի թոյլտուութեամբ*
**ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ**
(Баку, Прачешная, домъ Теръ-Ованесова).
Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական-առևտրական. կրթութիւն և պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։ Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի։)
ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ից։
Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում և Եղբ. Ծովեանեան և ընկ. ԲԱԳՈՒԻ բաժանմունքում։ Օտարաքաղաքացի ունկնդիրների յարմարութեան համար կուրսերում ընդունվում են գիշերօթիկներ։ Կուրսերի կանոնագրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը—տրվում են և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնադրին՝ БАКУ, А. И. Теръ-Каспаровъ,
(հ. չ.) 14—25

**BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie**
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
**Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.**
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՑԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն և Պօլիս։ Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 19/31 օգոստոսի ԱՆԱՏՕԼԻ չոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով։
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվին, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա։ ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Գօլիցեանական հրապարակ։ ՆՈՎՕՐՕՍՍԻՑՍԿ—պ. Մելխիսեդեկ Հերշենզօնին։ (հ. հ. չ.) 6—20


Дозволено цензурою, Тифлисъ, 21 Августа 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13